# ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

## ԽԱՂԻԿՆԵՐ

1(102).

Վերին հողեն սալուկ ա
Բող ձին մեջր կապուկ ա,
Բող ձի ի՞նչ կիննես նալր
Յար ջան ինչ կեննես խալր։

2(103).

Իմ թավլենր սալուկ ա,
Բող ձին մեջն նալուկ ա,
Մեռնիմ ձիուն խեծնողին,
Դո՞ր էլ էրթա, առն դուքա։

3(104).

Ջոջ տան թավլեն սալուկ ա,
Բող ձին մեջն նալուկ ա,
Բող ձին ինչ կանե նալն,
Սալղաթն ինչ կանի յարն։

4(105).

Ջուր ջրի դեմ առեք ա,
Ղալամ ձեռես աարեր ա,
Ղալամ ղարկողին մեռնեմ,
Ուշք ու միտս աարեր ա։

5(106).

Սարը ձուներ ռոնել ա,
Սրեն հելել, հալել ա,
Լսել եմ՝ հիվանդ ես,
Դարդդ ընձի տարել ա։

6(107). `

Էրկանք կաղամ՝ մի լար ա,
Դուշմնի աչքերն խավար ա.

7(108).

Բարղի ծառր շաա հով ա,
Տակն Սևանա ծով ա,
Աշխարհն ինչքան որ ման դաս,
Իմ սիրածս սրառվս ա։

8(109).

Ջախչի դուռը ջոջ փոս ա,
Քար կթալեմ կսոսա,
Քար թալողին ըան մր ասա,
Տղամարդր ափսոս ա։

9(110).

Մեր արաներր ջրով ա
Իմ յարոն էլ թրով ա,
Էդուց կդա խանի դուռ,
Խոսքերն օսկի ջրով ա։

10(111).

Բող ձին թամքեմ՝ բող ա,
Յողրան կքցեմ, ջաղդեն թողա,
Լայլաղն ընդավ, ես վերցի,
Ընենց դիցա, թե սաղ ա։

11(112).

Էսօր պությանր մերն ա,
Մաճկալն էլ իմ խերն ա,
Ղալաթեն էրած ջահելներ,
Միջի ֆիաանն իմ յարն ա։

12(113).

Հեսօր պութան իմ դորն ա,
Մաջի ռանող իմ յարն ա,
Ղալաղ էրած խոաղներ,
Միջի ֆիդան իմ յարն ա։

13(114).

Քուչեքը պաղ ու պուղ ա,
Իմ խոր առն դուրան-դուղ ա,
Էկան ընձի ուլելու,
Իմ խեր խրրրնոց դուղա։

14(115).

Բարղի ծառն ռանցր ա,
Սիրած յարն քաղցր ա,
Գնա նանին խարցրա,,
Օր չտվեց, փախցրա։

15(116).

Ջոլի սինձն վայ ի՞նչ ա,
Կաթն ու բրինձն ի՞նչ ա,
Ես սիրել եմ, ես կառնիմ,
Էդ գեղի խարարն ի՞նչ ա։

16(117).

Պարաեզ ունեմ գրախտ ա,
Ծաղիկ, ծաղկունքի վախտ ա,
Շեկ աղջիկ, ղամար աղա,
Էն էլ մեկ ուրիշ բախտ ա։

17(118).

Ջուր ջրի ղեմ առեր ա,
Ալափստոս տարեր ա,
Կալամ ղանող էն աղեն,
Ուշք ու միտս տարեր ա։

18(119).

Միղարս չիթ ա, չիթ ա,
Ես կառնիմ, աղեն չի տա,
Ագե, մեռնեմ քո հոգուն,
Ուրիշի իղլար մի տա։

19(120).

Էս մատիս մատանին քավորին ա,
Թաղա յար իմ բռնե՝ թագավորին ա։

20(121).

Խաց եմ թխել գարի ա,
Իմ յարը սաֆարի ա,
Սաֆար ճամփեքիդ մեռնեմ,
Խոսքերդ շաքարի ա։

21(122).

Էն առուն ջուր ա կեթա,
Մի ասեք ո՞ւր ա կեթա,
Քենին մախանա բռնե,
Յարոջ տեսնելու կեթա։

22(123).

Էս առվով ջուր ա գնում,
Հարց արեք, ո՞ւր ա դնում,
Քենին մահանա բռնեց,
Յար տեսնելու ա դնում։

23(124).

Այ տղա, ո՞ւր ես դնում
Էս ձորով ջուր ա գնում,
Մահանա քենին արել,
Նշանածին ա գնում։

24(125).

Աղջի, թունդիրը մուխ ա,
Իմ տեսած աղջիկը թուխ ա,
Շատ էլ մի կոտրտվի
Մի հայվագա գյադա յա։

25(126).

Ձայ եմ դրել նռով ա,
Ախպերս հետս խռով ա։

26(127).

Ջաղջի դուռը չիման ա,
Ախպերս չիմանա,
Էկան բրսչը տարան,
Մեկ անդամ չասեց ամա՜ն։

27(128) .

Դուշմանը դարդոտել ա,
Նանըն քեզ կարոտել ա,
Իմ որդու անուշ փեսա
Արի մեր տունը խոսա։

28(129).

Քյամին ճոճոալիս ա,
Դուռը շխկ-շխկ տալիս ա,
Աղչի, հելի դուռը բաց,
Գլխավորդ գալիս ա։

29(130).

Վանքի դռնով ես հնցա,
Վանքի ջուշպեն ես գողցա,
Յոթ սարի խիվնղցա,
Յարիս տեսա, լավացա։

30(131).

Էս ի՞նչ թավուր արև ա,
Բալիս դրգած բարե ա։

31(132).

Ախպեր ունեմ բանակն ա,
Յոթը սարի քամակն ա,
Յոթը սարը թըխ փուլ գա,
Բարով իմ ախպեր տուն գա։

32(133).

Սարի ամրուլ ծոցիս ա,
Դարդ ու բալեն խորքիս ա,
Պաքեմ էդ նիսջուն ծծեր,
Դուշմանը պագոելիս ա։

33(134).

Ոտներս հերկի մեջն ա,
Ձեռներս ներկի մեջն ա,
Էնպես մի ախպեր ունեմ,
Սալգաաի պոլկի մեջն ա։

34(135).

Ծաղիկ ունեմ ալանք ա,
Սրաի միջի սալանք ա։

35(136).

Մաանիքը մատովս ա,
Սիրածը սրտովս ա,
Սարրրի բալեն ապրի,
Շորերը վրովս ա։

36(137).

Հա սև՛ ա, սև՛ ա սիրտս,
Ծրնջըլու թև ա սիրտս,
Քանց լալը ուրմիլ չկա,
Բաց տրա՝ սև ա սիրտս։

37(138).

Վատ տղին տուն մի սարքա
Գիլնի էն տուն կքանդա։

38(139).

Հելա սարն, սար տեսա,
Սար վըր սարին ես տեսա,
Քեզի մեռնիմ, բանցր սար,
Իմ սիրած յարին տեսա։

39(140).

Հելա սարեր սար տեսա,
Նարինջ կուլկով յար տեսա,
Հելա սարերն ու ղարձա,
Սարը վըր գլխիս բարձա։

40(141).

Հելա, սարը, սար տեսա,
Ճերմակ չուլքով յար տեսա,
Գնա քու մորը ասա,
Ինձի անա քե փեսա։

41(142).

Հելա սարը, սար տեսա,
Թուխ մաքու տեղ լոր տեսա,
Ասի բռնեմ ու բերեմ,
Քնա ու երազ տեսա։

42(143).

Հելա սարը՝ սար տեսա,
Սարն վըր սարին ես տեսա,
Քեզի մեռնիմ, բանցր սա՛ր,
Իմ սիրած բալին տեսա։

43(144).

Ջայիր չիման աղա յա,
Յարի բռնել խաթա յա,
Քյոփօղլի, մի ուռի, պաղովի,
Մեկ թուլնջի ղյադա յա։

44(145).

Ջուր ջրի դեմ առեր ա,
Ալափասս տարեր ա,
Ղալամ ղանող էն աղեն
Ուշ ու միտքս տարեր ա։

45(146).

Երկանք աղամ մի յարա,
Փլավ էփեմ բիբար ա,
Յարս Կյավառա գիքա,
Ջերն րիթուն խիյար ա։

46(147).

Ամպել ա ռութա-ռութա,
Իմ կերած կարմիր թութ ա,
Իմ սիրած թըխ ինձ տան,
Բիրադի· ասեն սուտ ա։

47(148).

Ամպել է բութա-բութա,
Իմ ուղած կանաչ թութ ա,
Պարի միջի չեկ աղջիկ,
Քեզ կլռնեմ ինձ ռութա։

48(149).

Ամրերն բութա, բութա,
Իմ ուլած կանտնչ թութ ա,
Պարի միջի չեկ տղեն,
Բռներ եմ ընձի բութա։

49(150).

Ամրերն ռութա-ռութա,
Իմ ուտած կանաչ թութ ա,
Պարի միջի չեկ տղջիկ,
Քեզ ռոնեմ ախպորս ռութա։

50(151).

Ամպերը բարա-բարա,
Իմ սիրան ա կապույտ յարա։

51(152).

Ջեբիս բերանը օյա,
Յարս մարալի սոյ ա,
Ջեբիս բերանը ճաշա,
Աշխարք յարիս թամաշա։

52(153).

Ժամու դռնեն դուս հելա,
Իմ յար շիվար տեսա,
Ջուխտակ հաշկեր մոմուկ,
Ձեռը ծոցին տեսա։

53(154).

Ամպերն փարա-փարա,
Իմ սիրտը՝ մորուց յարա։

54(155).

Ամպերն բարա-բարա,
Ես իմ սրտով յար չառա,
Աստված, դիվանիա մեռնիմ,
Յան օլում տուր, յան չարա։

55(156).

Կանգնել ես ափսոս բախ ա,
Հայլուղից ճոթը կախ ա,

Սիրեցի, չառա փախա,
Ամեն տենալն մախ ա։

56(157).

Կայնել ես ախա-բախա,
Լաչակիդ ճոթը կախ ա.
Ապարանը քարոտ ա,
Առ յարիտ, ծոցդ պախա։

57(158).

Դուն քելե բախա-բախա,
Շաղմախու ճոթեր կախա։

58(159).

Դուն քելիր քուշա, քուշա,
Ջերիդ փամփուշաներ փուշ ա
Դու խորոտ ես, խելքդ քիչ ա։

59(160).

Դու քելիր բախա-բախա,
Լաճակիդ պխեր կախ ա։

60(161).

Կանաչ արտեր հաց տարա,
Յարիս տեսա էգ ղառա։

61(162).

Գուլթանը հոլա-հոլա,
Հորիկ քչողն էլ բոլ ա։

62(163).

Դուն քելիր քուշա-քուշա,
Ջերիա պոպոկներ փուչ ա։

63(164).

Ջուր ջան, բարե էրա,
Էլման մի չարա էրա.
Ջուր ջան, գուկաս բանցր սարից,
Կիգաս կթափես մառմառ քարից,
Ոն որ ղառնտ հուր իրղարեն,
Գոտու յարեն՝ հուր վրեն։

64(164ա).

Գուլթանրս լտ, հռ լա,
Գուլթնի ատկը հոլա,
Շեկլիկ աղջիկ խաց կաանա,
Մեկ կքելա, մեկ կկտյնա,
Մարդու ալլիման կանա։

65(165).

Սարեր ման էկա, չոլեր ման էկա,
Իմ յարի պես յար չգաա։

66(166).

Սարի Թրթնջուկ Թաղա,
Մեղր ու կարագ քեզ մաղա,
Ինձ պես նաղելի աղջիկ,
Քեղ պես գյադին ո՞նց սազա։

67(167).

Թախաս ղարա յա,
Սիրտս յարա յա,
Մ՛խ մալս յաղմա յա,
Սիրտս կաղմա յա։

68(168).

Արի, մի գնա,
Դարձիր, մի գնա,
Աշխարհս մեռնել կա,
Ջահել չենք մնա։

69(169).

Տեղ եմ թալե փոնթ գուքյա,
Բարձի տկից խոտ գուքյա,
Մեռնեմ միջի քնողին
Անուշ խնգյա խռա գուքյա։

70(170).

Դոշակ ձգի, փոթ էկավ,
Տեղիղ աակից խռա էկավ.
Մեռնիմ էգ խաս բռշամխա,
Մեջեն անուշ խոտ էկավ։

71(171).

Տեղ եմ գցե, փոթ էկավ
Բարձ եմ գրել, խոտ էկավ,
Մեռնեմ մեջի քնողին,
Մեջից խնկախոա էկավ։

72(172).

Տեղ եմ թալե՝ քունտ գուքյա,
Բարձի ակեն խոտ գուքյա,
Մեռնեմ մչի քյնողին,
Անուչ խնկա խոտ գուքյա։

73(173).

Կանաչ արտը խաց տարա,
Յարիս աեսա ետ ղառա.
Խնձոր տվեց, ես առա,
Գլուխ տվի, ետ ղառա...

74(174).

Գյանջու քամին գուքյա,
Դուռը ճռռ-ճռռ գուլա,
Ախչի, հելի դուռը բաց,
Գլխավորդ գուքյա։

75(175).

Հոգի տկով ջուր կէրթա,
Ղատար օսկին ղուր կէրթա,
Ջայնամ էն ղաաար օսկին,
Ախպերս բանակ չեթա։

76(176).

Հոգի տկով ջուր կէթա,
Ղաթար օսկին ղուր կէթա,
Ջայնամ էն ղաթար օսկին,
Իմ յարը ասլղաթ չէթա։

77(177).

Բարդի ծառին բար չկա,
Սիրտով սիրող յար չիկա,
Աստվա՛ծ, ղիվանդ մեռնիմ,
Սիրտով սիրող յար չիկա։

78(178).

Վիճակ, վիճակ, վիճակի բարա,
Դու հելար բերդի բարա,
Ջա՛ն վիճակ ու նաղարա,
Ես հելա բերդի բարա։

79(179).

Բամբակը լուլա բարա,
Իմ յարն մինուճար ա,
Մինուճար բոյին մեռնեմ,
Աշխրին բարեմբար ա։

80(180).

Էն սարը բանցր սար ա,
Տակն ժնջլված քյար ա,
Ես քե գյոխաու սիրեցի,
Բա ո՞ն էրեց աշքյարա։

81(181).

Մի բարձ կարել եմ, իմն ա,
Մեկն էլ կարել եմ, իմն ա,
Քյաղքի քարվան գալիս ա,
Մեջի ապրանքը իմն ա։

82(182).

Ջաղչի դռնով ես հնցա,
Անձե էկավ, ես թռշա,
Արև ղանեց, ես չորցա,
Վարդի նման ես բացվա։

83(183).

Սարերը հեշաացել են,
Ջրերը շաաացել են,
Խարար աարեք իմ յարին,
Մուշաարիք շաաացել են։

84(184).

Արաղը հեշաացել ա,
Ճամփեքը կոշաացել ա,
Խարար աարեք իմ յարին,
Առնողս ջաաացել ա։

85(185).

Արաղը հեշաացեր ա,
Ճամփեքը կոշաացեր ա,
Ջուղար արեք մայրիկիս,
Մուշաարին շատացեր ա։

86(186).

Ծառի տակը ալաա յա,
Քանի կայնեմ ֆայաա յա,
Մի մեղադրեք դրկիցներ,
Էս ի՞նչ թավուր ղայդա յա։

87(187).

Էրկանքը ղրդռում ա,
Սարերը սարսռում ա,
Եկան սալդաթ| անելու,
Իմ սիրտը մռմռում ա։

88(188).

Էրկանքը դրողրռում ա,
Սարերը սրոսրռում ա,
Ես իմ սիրածը չառա,
Սիրաս մռմռում ա։

89(189).

Փոսը լցվել, սառում ա,
Էս էլօղլու խարաթեն,
Ինձ մոմի պես հալում ա։

90(190).

Ալաշկերա բարձր աեղ ա,
Ջուրը խիվնդի դեղ ա,
Սիրած սիրածի չեն աա,
Էս ի՞նչ անավեր աեղ ա։

91(191).

Մեր աան հեաե արարմ յոնջա,
Ձեր աան հեաե արարմ յոնջա,
Գաթա թխեմ, ճամփեմ խոնջա։

92(192).

Էն սարի աակը խով ա,
Սիրաս արնով ծով ա,
Սարից էկավ ձիավոր,
Հարցրեք՝ յարար ո՞վ ա։

93(193).

Ծառի աակը արոտ ա,
Քուր՝ աղբորը կարոտ ա։

94(194).

Էն սարը բանցր սար ա,
Իմ յարը մնկուճար ա։

95(195).

Մեր սարերը բանձր ա,
Աղբեր, լեղուդ քաղցր ա,
Կրակն ընկե, ինձ կերի,
Սրի ընձի փախցրա։

96(196).

Էրկտնքս աղի վըրա,
Շամամս թաղի վըրա։

97(197).

Ջաղցի ղուռր աաշած ա,
Յարս ղալամ քաշած ա։

98(198).

Ջաղցի դռնեը դադուկ ա,
Պատկերքդ վրեն քաշուկ ա,
Յարս ընձի չճանցցավ,
Ջիդյարս փորիս էրուկ ա։

99(199).

Սաըեըն ամպե, ձուն չիդա,
Յարիկ խռովե, աուն չիդա։

100(200).

Ծովի ջուրը սառել ա,
Ղամեն ձեռքս տաըեը ա,
Բաղի միջի շեկ աղեն,
Ուշք ու միաքս աարեր ա։

101(201).

Ձեր դռնով հրնցա,
Անձրև ավավ, թռջա։

102(202).

Էն սարերը ամպել են,
Իմ յարն իր ձին թամրել ա,
Հեղե խըտ յարռշ խաղցեը ա,
Անձրև էկե թռջեր ա,
Արե ղանե չորցեր ա,
Քյաֆուր վարդեը՝ բացվեր ա։

103(203).

Իմ յարը կըռնել ա,
Վարդը ձեռին ռնել ա,
Ամեն ծտռին մի փշատ,
Իմ յարի ումրըը շատ։

104(204).

Աղես ընձի ափել ա,
Դուռը վրես շիքել ա,
Խարար տարեք իմ աղուն,
Սերըն ընձի հաղթել ա։

105(205).

Թշիտ վրեն ջուխա խալ ա,
Քեզի նայելով վառա,
Խամար բերե ջուխտմ բալա։

106(206).

Ամպել ա, դուսը մութ ա,
Քո կերած՝ կանաչ թութ ա,
Թե դու ինձի խաըում ես,
Խոսքդ ինձ ի՞նչ օդուտ ա։

107(207).

Ջաղցի դուռը աառթ ա,
Կտուրը լիքը մարդ ա,
Հրես էկավ իմ յարը,
Գռաիկը չիքը վարդ ա։

108(208).

Ջաղչի դուռն մե փռս կա,
Քյար կթալեմ կսռսա,
Քյար թալողին ռան մ'ասա,
Տղամարդ ա, ափսուս ա։

109(209).

Մեր սըախր ավլած ա,
Իշխան ձուկը խաշած ա,
Շուա կնեմ, փլավ իցկեմ,
Քանի յարս կայնած ա։

110(210).

Առվներ պաղ ու րուղ ա
Իմ խոր աուն դուրան-ղուղ ա,
Էկան ընձի ուղելու,
Իմ խեր խըրըընոց զուզա։

111(211).

Աշխենի դուռը դուղ ա,
Աշխեն կայնե Անտոն կուղա.
Էըկու հարուը ի՞նչ անի,
Իմ խերը խազար կուզա։

112(212).

Մեր կալի աեղը փռս ա,
Քար կթալեմ՝ կսռսա,
Իմ դինը խազար մանեթ,
Ո՞ն կանա ընձի ուղա։

113(213).

Սարից հիճար փիադա,
Թըվանքն ուսիդ, այ դյադա,
Ես, տու իրար սիրեցինք,
Վերե տսված շհադ ա։

114(214).

Լուսնակը ռըլորել ա,
Ամպի մեջ մոլորել ա,
Յար ջան, ծոցիդ մեջ,
Դռշերդ ռոլոըել ա։

115(215).

Թ՝ավան ծակ ա, եղ չկա,
Փեսեն եկավ, տեղ չկա,
Փեսին ջատ հերես մի աա,
Փեսին էյթիպար չկա։

116(216).

Էս վարդն ինձ համար ա,
Մեջքին օսկի քյամար ա,
Քու հաշկերը խումար ա,
Յարար էս ո՞ւմ համար ա։

117(217).

Ես ծարավ եմ, ջուր չկա,
Սարերին աղբյուր չկա,
Վախենում՝ ղարիբ մեռնեմ,
Վրես մեկ լացող չկա։

118(218).

Բաղչեն մտա, բար չկա,
Շատ խորոտիկ յար չկա,
Յարս բարդու ետևն ա,
Տեսնելու գյուման չկա։

119(219).

Ջաղցի ղոնեն ջուր կիգա,
Աղջիկ տղին հուր կիգա,
Աղջի ջան, կանչա լսեմ,
Քանի սրտիս դուր կիգա։

120(220).

Թաղա խացի խոտ կիգա,
Յարը յարի մոտ կիգա.
Իմ սիրած նխշուն սաղից,
Անուշ խնկախոտ կիգա։

121(221).

Ախ ըսիմ, արին կիգա,
Սև սրտին զարուն կիգա,
Վախիմ՝ ղարիբ մեռնելուց,
Ոչ քիր, ոչ ախպեր կիգա։

122(222).

Բոյ-բուսաթիդ ես մաաաղ,
Նոր զալած րեխիտ մատաղ,
Երեք օր ա չեմ տեսե,
Հետ եկած ճամփիդ մաաաղ։

123(223).

Սարերի խովին մատաղ,
Իմ յարի աչքին մաաաղ,
Երեք օր ա չեմ աեսե,
Բոչամին, բոյին մաաաղ։

124(224).

Էթասեմ Հայթաղ
Աննսեմ մաաաղ,
Տաննսեմ յարիս.
Խասնի մուրաղին։

125(225).

Այ հովն ընգավ, հովն ընդավ,
Մարալ եղը ծովն հընգավ։
Տարին էկավ բոլորավ,
Ջիգյարս փորիս խորովվավ։

126(226).

Օչխարը սարն ելավ,
Մեր բանը կովով հելավ,
Սարարի ուրին մեռնի,
Դուշմանի սրտովն հելավ։

127(227).

Ջրերն հելան, ջուր չելավ,
Ջըերան կարմունջ չելավ,
Վախնամ ղարիր մեռնիմ,
Վրես էլ ու դուն չելավ։

128(228).

Հավ թռավ, թառեն հելավ
Իմ բանը ըսկի չհելավ։

129(229).

Խնձոր գցի, նուռ էկավ,
Շապիկ կարի, կարճ էկավ.
Վարդ թալեցի, նուռ էկավ,
Ինչ կտրեցի, կարճ էկավ։

130(230).

Երգանք էն սարովն անցավ,
Սինին խնձորով լցվավ,
Բոլորի յար աուն էկան,
Իմ յարն էն սարովն անցավ։

131(231).

Էրկանքը սարով անցավ,
Տունս խնձորով լցվավ,
Ամենքի յար տուն էկավ,
Իմ յարը սարով անցավ։

132(232).

Երկանքն սարով անցավ,
Սինին խնձորով լցվավ,
Ամենու ախպեր աուն էկավ,
Իմ ախպեր խոոով անցավ։

133(233).

Խավ թռավ, թառեն հելավ,
Իմ բանը ըսկի լավ չելավ,
Վայիս, քու բալեն մեռնի,
Դուշման, քու սրդովն հելավ։

134(234).

Խավ թռավ, թառեն հելավ.
Իմ բախաս ըսկի լավ չելավ,
Դուշման, քու բալեն մեռնի,
Քու խոսքովն հելավ։

135(235).

Հալանաթն էկավ, հուրն ի հեա,
Ջնդզնգուն ջուրն ի հեա,
Թանդ Նելա, էժան ծախվա,
Էդ դուշմնի խոսքի խափվա։

136(236).

Գացի խոշյտն
Դառա Միրզաշան
Էնդեխեն Ջուջան*,
Բերի թթու թան,
Ուտա պաբեն,
Էթա գութան։

137(237).

Էթամ Սևան,
Բերեմ իշխան,
Դնեմ կողան,
Ուտա իմ Շուշան։

138(238).

Էթամ Զորադեղ,
Բերեմ քոռ անձեղ,
Ճամփեմ խնամուս,
Թ՚ըխ մեռնի ըննամուս։

139(239).

Էըթանք Իսաանրոլ,
Դառնանք Առղըռում,
Պիրենք փարա բոլ
Առնենք ջուխտմ սոլ
Խակենք դորեգոր։

140(240).

Ցորեն եմ արե աջան,
Իմ բոյ, քո բոյ բաըիշան
Արի էթանք սուրբ Նշան,
Օսկե մատնիք աամ նշան։

141(241).

Աղչի, անունդ Շիշան,
Դեյրեմ ունես խշխշան,
Արի էթյանք Սուրբ Նշան,
Իմ մատնիքս քե նշան։

142(242).

Այ աղա, անունդ Ուռուշան,
Բոկիդ տկին թուխ նշան,
Արի եթանք սուրփ Նշան,
Օսկե մաանիք քե նշան։

143(243).

Հելա սարերը սեյրան,
Ջա՛ն գյուլում, ջա՛ն, ջա՛ն,
Չղաա քեղ, ջեյրան,
Ջա՛ն ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն։

144(244).

Հելա դյացի Սեան սեյրան,
Դեմս հելսն ջուխտմ ջեյրան,
Պատիկ բերան՝ յարիս նման
Ցար աարողի տունը վերան։

145(245).

Բերղի դուռ շայիր-շիման,
Ախպեր օղլան բե իման,
Քուր ռոնին, տարան դիվան,
Մեկ րերան շասեց յաման։

146(246).

Խանե՛ յաման, ջանե յամա՛ն
Դիլրաը յամա՜ն, յամա՜ն, յամա՜ն.
Խանեն կայնե դեմ սմըոցի,
Ջուխտմ նոներ մըչ հուր ծոցին,
Խանե՛, մատաղ ճերմակ ծոցիդ
Խանե՛ յաման, յամա՜ն, յամա՜ն։

147(247).

Պոկներղ ջուշան, լեղուդ քիշմիշ ա,
Ուղում եմ եռանալ, սերտ անուշ ա։

148(248).

Ամրեր եմ ամրի նման,
Շաքար հրնդե շան բերան։

149(249).

Ամպել ես ամրի նման
Շաքյար էս ղանտի նման։

150(250).

Քամին էկավ երան-մերան,
Դարդս հելավ, խասավ րերանս,
Խափոտելով յարս տարան,
Ցար տարողի տունը վերան։

151(251).

Ջուխտմ դյութան, վար կը էնեն,
Առնա խաթուն խաց կտանե,
Խաց կաանե, թող կխանե,
Հաշկով-հրնքով մարդ կսպանե։

152(252).

Ես ինչ կենեմ քերեկան,
Ցարս տասվեց տարեկան։

153(253).

Վիճակ դըրին վըր թելին,
Պրծավ հընդաւ վըր սելին։
Պաաի քարեր կոարավան,
Քու ալ ջուբեն կարաավ։

* Այս գյուղերը գտնվում են Ալաշկերտի և Դիադինի գավառներում (Ս. Կ.)։

154(254).

Ակոս վերև ամպել էր,
Անձրև էկե, թուլեր էր,
Արև ղարդեր, չորցեր էր,
Քյանց քյաֆուր վարղ բացվեր էր,
Իմ Աշոտ ձինը թամքեր էր։

156(256).

Կումիկ պա՞ մի կաց, կարոտ եմ
տեսքիդ
Մի թոփ հընցի, ծարավ եմ ձենիդ։

157(257).

Գյնացի չայիր լվացք,
Թեշտ ծակվեց, ջուր գնաց,
Յարիս շապիկր մնաց,
Յարս էկավ, խռով գյնաց։

158(258).

Ես գնացի չայն վլացք,
Թեշտը կոտրավ, ջուրր գնաց,
Իմ մեկ ախպոր շարիկ մնաց։

159(259).

Գացի չայիրր վլացք,
Թեշտ ծակվավ, ջուր գնաց,
Յարիս շապիկր մնաց,
Յարս էկավ, եռսոա գյնաց։

160(260).

Գնացել եմ չայր լվացք,
Թեշար ծակվավ, ջուրր գնաց,
Սապոնր կս է ուկեշրած։

161(261).

Կռու՛կ, կանչա սարերաց,
Սրտիկ խովցու ղարիբներաց,
Թ'խել եմ թալա խաց,
Սրտիկն իմ մղկտաց։

162(262).

Էլի աչքս մնաց էղ անտեր հորեն,
Կրակն հնդնի վառի վատ մարդու
ղուրեն։

163(263).

Էլի աչքս մնաց Ախաիյա յանր,
Կրակ հնդի վառի վատ մարդու ջանր։

164(264).

Էրեսիս հայեն գնաց,
Միսս հալավ, ոսկռռս մնաց,
Միսս հալավ, ոսկռռս մնաց,
Ջինար, չինար եմ, անրախա յար։

165(265).

Նախրադնեն ուռի ծառ,
Խնձոր թալեմ, արի տար,
Լավ տղա էր փախցուցեր,
Լավ աղա ես՝ փախցու, տար։

166(266).

Նախրակնեն ուռի ծառ,
Խնձոր թալեմ, արի աար,
Խնձորի կես կիսուկ էր,
Ջորս պոշեն արծաթուկ էր։

167(267).

Նախրաղնեն ուռի ծառ,
Նախիր տանեմ հելնեմ ծառ,
Խնձոր թալեմ արի տար.
Խնձորի կես կիսուկ էր,
Մեջ լայլղին փաթթուկ էր,
Յարոջ դոտին դրուկ էր։

168(268).

Ամպեր ա կամար-կամար,
Քուր մեռնի ախպոր խամար,
Հիցուն օր ղախո եմ պախե
Ղարիբիս խաթրի խամար։

169(269).

Լուսունկան կամար-կամար,
Ես կլամ քեղի համար,
Ուզում եմ թուշտ պադեմ,
Իմ Նանի խաթեր համար։

170(270).

Ժամու դռան մարմառ քյար,
Ես չեմ առնե ղառ յար,
Ջաա յարր հաշկի փուշ ա,
Սրասվ սիրածն անուշ ա։

171(271).

Ջեր դռանր կլնեմ նոքար,
Յար, ինձ մի դցի քարեքար։

172(272).

Ես կքելի դիդար-դիդար,
Քաւսուն քեզ պես կհեղներ շիվար։

173(273).

Արաղչին աալաշ-աալաջ,
Համ խորոտ ես, համ քյալաշ։

174(274).

Արաղչին աալաշ-աալաշ,
Հա՛մ խորոաիկ, հա՛մ քյալաշ,
Ջերս րանամ փարայլու,
Սիրտս րանամ յարայլու։

175(275).

Դու մտեր ես ծով, կլողաս,
Հելեր ես ափներ, կդողաս,

Քանց նռան հատիկ կշաղաս,
Իմ խին դարդեր իրար կուտաս։

176(276).
Բարակ ճամփեն մտեր ես,
Կորցրածդ դտեր ես։

177(277).
Տղա, դու եղարած ես,
Մեր անեն րեղարած ես։

177ա(278).
Տղա, դու հուր էս, մուր էս,
Ինձանեն րեղարած էս։

178(279).
Լուսնակ րոլորել ես,
Մաղերդ օլրել ես։

179(280).
Տնեն հելար, խաց կտանես,
Հաշկով-հնքով մարդ կսպանես։

180(281).
Յարա-յարա սիրտս,
Տանից կարոտ ա սիրաս։

181(282).
Ի՞նչ կանեմ ոսկի, արծաթ,
Ի՞նչ կանեմ մալ ու գովլաթ,
Էն աղեն էր րեխարար։

182(283).
Քո յարն եմ ես,
Հիվանդ եմ ես,
Ա՛ռ խնձոր,
Արի ինձ աես։

183(284).
Ա՛յ աղջի, հուր ես, մուր ես,
Ես ծարավ եմ, դու ջուր ես։

184(285).
Ա՛յ տղա հուր ես, մուր ես,
Ես ծարավ եմ, դու ջուր ես,
Էս համրարձման գիշերը,
Ես ման կգամ, դու ո՞ւր ես։

185(286).
Յարիս ճվները րարակ,
Փրչամը՝ ուլունք րալաք,
Էկավ մտավ իմ ծոցը,
Սիրտս դցեց սև րոցը։

186(287).
Քերիր կերար կաթի տակ
Սիրիր թողիր պատի տակ։

187(288).
Ծառ ունեմ Հնդա քաղաք·
Ծուղ ավե քաղքե-քաղաք,
Ամեն ծառին՝ մեկ փշատ,
Իմ մեկ սխպոր ումրը շատ։

188(289).
Կարմիր փափտր, թուխ վուշի,
Ջուխտդ իրար կույմշիք։

189(290).
Ես կմեռնեմ, որ դու կաս,
Ոչ հիվանդնար, ոչ տքաս,
Ըխտատեղրանք ման կգաս,
Խարսնաաներ պտտիս,
Կանֆերտ ուտես, թղթերը շպրտիս։

190(291).
Առվի ափերն ա ղջի,
Մարդ չի խավնի րջի,
Գտեր եմ իմ սիրուն յար,
Կայներ եմ խետ դյտլաջի։

191(292).
Առվի ափերն ա դջի·
Դարդման չեմ խավնի րջի,
Գթեր եմ իմ թուխ քյանքյուլուով,
Կայներ եմ խետ դյալաջի։

192(293).
Ես քեզ սիրեցի, որ մարգ չիմաներ,
Վերև աստված, ներքև միջնորդն
իմաներ։

193(294).
Ես քեզ սիրեցի, հերու խերեղնամ,
Եթե ընձի չառար, իջնես գերեղման։

194(295).
Ամպել ա, ձուն չի գալի,
Կայնել ա, առն չի դալի.
Ով իմ սիրածին առնե,
Ջուխա աչքերը խավարի։

195(296).
Ամպել ա, ձուն չի դալի,
Մթնել ա, տուն չի գալի,
Սիրտս կրակով լցված,
Աչքերիս քուն չի գալի։

196(297).
Գնացի հանդը կըրակի,
Ոաս դիպավ փըռանքի,
Շան գյադեն հըռկեր ա,
Չի դա մեր տուն կիրակի։

197(298).

Ծառ մը ունեմ ծիրանի,
Քամին թել-թել կտանի,
Արի դնանք դիվանի,
Ում պսմաթին ա թող տանի։

198(299).

Ծառ եմ տնգե շաֆթալու,
Ցալըս եկե ման դալու,
Էդ շան աղայի քյանքյուլ,
Ընձի արե սավկալու։

199(300).

Ուփի ես, կոնսլ մի,
Բարդի ես, չորնալ մի,
Թե աստված ունես,
Սիրածիդ մոռնալ մի։

200(301).

Մատումս կա մատանի,
Ձեմ տա խազար թումանի,
Ի՞նչ կլնեմ խազար թուման,
Կտամ մե բազրդյանի։

201(302).

Քյաշկա ես նալբանդ հըլնի,
Վերի քուչեն բանա հըլնի,
Տեսնեի՝ յարս ռալիս ա,
Ձոքի, չաքմեքը քյաշի։

202(303).

Բարդի ծառին բար չըլնի,
Սռանց քյարյուլ յար չըլնի.
Սիրտը որ կա շուշա յա,
Որ կոտրեց՝ ճար չըլնի։

203(304).

Մածուն մերի, սեր չունի,
Ձուկ եմ խաշել, փոր չունի,
Ղուլ ու ղարդաշ շատ ունեմ,
Մի ջան-ջիգյար յար չունեմ։

204(305).

Վանքի ձորում խաղ ասի,
Խաղի մեջ քե բան ասի.
Ինձի էգուց սանում են,
Սուրբ Սարգսի պես հասի։

205(306).

Ձայիր-չիման սաղ պիտի,
Իմ որսակը ղաղ պիտի,
Ի՞նչ եմ անում թուլնջին
Իմ յարը շահրաղ պիտի։

206(307).

Դաջտից ծաղիկ քաղեցի,
Խորոտ փնջեր կապեցի,
Անուն դրի մանուշակ,
Ընձնից քեզի հիշատակ։

207(308).

Խըմբարձման կիրակի,
Խամբարձում դելաքդ կատարի,
Խո՛րս, խան վիճակ բարի։

208(309).

Բանցը սարից ծուխ կըլնի,
Մե բարալիկ մուխ կըլնի,
Քուրն ախպորը կուրբան կլըն,
Կարիր տեղի խուրն կըլնի։

209(310).

Կայներ եմ ծառի խովի,
Աչքս ըջերի ճոմփին,
Սարիր, բալեդ վա՛յ մեռնի,
Ջթողար խասիմ մուրազիս։

210(311).

Նարոն կայնե կարմնջին,
Խալ-խալ դինաևրն ակնջին
Խարար տարեք ղոքնչին,
Թըխ դա խասի Մկրտչին։

211(312).

Ախպերս կայնե կամրջին,
Ոսկե դնդերն անդճին,
Էրանիկ տամ էն քվորն,
Ախպերն կայնե թաղավոր։

212(313).

Նախիրն էկավ մեջ գեղին,
Նախրի պուլիկն էր ղեղին։

213(314).

Դեղ եմ դըե իլանչի,
Էս իմ գլուխն դիվանչի,
Ընձի գանկի մոռթ արեք,
Ես էդ թուլին հալան չեմ։

214(315).

Դութանը մանի-մանի
Ճեկ աղջիկ խաց կտանի.
Իմ յարը հանդում, չոլում,
Իմ քունը ո՞նց կտանի։

215(316).

Հելա դիղնոց. խոտ թափի,
Կարմիր խնձորով թափի.
Լավ աղջիկ էր, չխարվեր,
Կարմիր թշեր չպագվեր։

216(317).

Կաքավ ջան, արի, արի,
Թութուշը օսկի գարի,

Թե խերու ես, շուտ արի,
Թե շառու ես, էգ դարձի,
Կտքավ ջան, ղայթան գործա՝
Ախպորս շուխի բերանին։

217(318).

Աղջի՛, աղջի՛, ջա՛ն աղջի՛,
Աչքերդ սև-սև, աղջի,
Ցա դու կդաս մեր տունը,
Ցա ես կառնեմ քո քուրը։

218(319).

Աեւվո՛ր, սարերը հելի,
Կանաչ դարերը հելի,
Իմ յար սարեր ա գյացե,
Ջոլերու մեջ տուն դրե։

219(320).

Լվամ, լվամ չիստկի,
Վարդի ջրով կիստկվի,
Փուք տամ, քամին չորցնեմ,
Ծալեմ ու ծոցս դնեմ,
Հիրգուն դաս տուն՝ հագցնեմ։

220(321).

Ծառ եմ տնկե ծիրանի,
Քամին թել-թել կաանի,
Ոն որ իմ խեյրաթ կանի,
Հինք աստծուց առնի։

221(322).

Ծառ եմ տնդե ծիրանի,
Քամին թել-թել կանի,
Ով որ իմ ղեյրաթ կանի,
Լիք օրորոց չաեսնի։

222(323).

Հելա սարն սար սնձի,
Ոտքս առավ քոլմ գնձի,
Բոշամ ջան, դու կոնձի,
Աղջիկներու լավն ընձի։

223(324).

Հելա սարերը սնձի,
Պապե մուրուսդ կոնձի
Էկան մեր աուն ուղելու
Հորի՞ չտվիր ընձի։

224(325).

Թարթարները կարեցի,
Լցի տոպրակ, կարեցի։

225(326).

Ավեաարան ուխա արի,
Իմ ծամերը ջուխա արի։

226(327).

Գյնացի սարը սնձի,
Ոտս դիպավ քյոլ դյնձի,
Մակեր ջան, դու կոնձի,
Տղեններու լավն ընձի։

227(328).

Ոտս առավ քոլ գնձի,
Պապե, մորուսդ կոնձի,
Էկան մեր տուն ուպնդան,
Հորի՞ չտվիր ինձի։

228(329).

Իմ յարն ընձի յար պտի,
Ջեռումը ֆանար պտի,
Իմ յարի կայնուկ տեղը,
Մե չինար ծառ պաի։

229(330).

Հելա սարի գլոխ, քաղի ծաղիկն ու վիճակ,
Քաղցր ախպերս տարան, ես մացի միջակ։

230(331).

Ես մեկ թառլան ի կուշ ի,
Ջեր թաղում բուսած նուշ ի,
Ասաված վկա, սուտ չկա,
Դուն ինձնից անուշ իր։

231(332).

Բուլվարը ման արի,
Բալիշ դնեմ, օթաղի յան արի։

232(333).

Կանչում եմ արի՛, արի՛,
Արի՛, մոաս ման արի։

233(334).

Ծաղիկ ունեմ նարնջի,
Աղա՛, վեր արի փնջի,
Ծաղիկ Ծաղկեվանա ես,
Աւլից Հերեանայ ես։

234(335).

Ես մի չոր ծառ էի, դու գարնան արե,
Քո սիրով ծաղկեցավ, իմ թուփ ու տերեւ

235(336).

Ճամփեն ռոնեք լուս հըլնի,
Իմ նորախարս դուրս հըլնի։

236(337).

Արե էր ամպի տկին,
Սուրբ Հակոբա ճամփի ակին.

Մի էնպես սիրտեր ունեի,
Խրեղան ձին՝ թամրի տկին։

237(338).
Արեը սառե վրր բաղանին,
Մամեն մեռնի հուր Վարդանին։

238(339).
Նստել եմ ոսկե սինին,
Խմել եմ նռան գինին։

239(340).
Բլրուլ եմ րաղի միջին,
Տնրե եմ թաղի միջին
Մի աննման յար ունեմ,
Իմ բոլոր խաղի միջին։

240(341).
Կաքավ եմ քարամիջին,
Ձեն կուտամ ձորամիջին,
Աստված ջան, մուրազս առ,
Գալող շարթվա միջին։

241(342).
Արև առավ դերանին,
Ես ղուրրան ավեարանին,
Ջուխտակ ղշեր ղուս հելան,
Կանաչ խոար բերանին։

242(343).
Դու նստեր ես ոսկե գյամին.
Կղղղղա սիրուգ քամին,
Էրնեկ քո կուշա նստողին,
Շամամ ծծեր գրկողին։

243(344).
Բաղչեմ եմ գրե դարին.
Պայման եմ արե յարին։

244(345).
Կայներ ես վարդի հովին,
Քամին աա կրծքիդ մովին։

245(346).
Բոստան եմ գրե վեր էնա ղարին,
Աստված ավերի էս տարվա աարին,
Ջելավ մեկ ջամամ, օղորկի յարին։

246(347).
Աչքս քցել եմ յարին,
Ոաս ավել եմ քարին,
Էրթա՝ ու էլ հեա չգա։
Քեղ զինվոր տարած տարին։

247(348).
Կայնեմ քարին ու սարին,
Գիր գրեմ ղարիբ յարին,
Արցունքով դրեմ կանչեմ,
Անաեր մնա ըսենց աարին։

248(349).
Հելանք դեմ արինք սարին,
Աչքս ընկավ գիմաց քարին,
Դուշման մեզ քյաշեց սուր,
Ետ չգա էն աարին։

249(350).
Կաքավը կայնե քարին,
Կտուցը լիքը տրին,
Մե ղայլուղ վարդ եմ քաղե,
Կը ղըկեմ իմ յարին։

250(351).
Ակը դեմ առավ քարին,
Էկավ րոլրավ աարին,
Խոսկիցդ թե եա դառար,
Ջխասնես քու մուրազին։

251(352).
Դու կայներ ես մըջ ամրոցի
Ջուխտակ շամամ մըջ քո ծոցին,
Մեկ առ վանեմ վըր իմ խոցին։

252(353).
Ջուրն հէլե արտին, արտին,
Էկե թալե վրր թախաին,
Եռի քուր մեռնի մեկ ախպոր,
Հա՛մ գլավին, հա՛մ թախաին։

253(354).
Կայնել ես ծառի խովին,
Ծամերդ գեյըի րոյին,
Էրնեկ քեզի առնողին,
Շամամ ծծեր գրկողին։

254(355).
Կայներ եմ րալկոնի խովին,
Ծամերս ա դեյրի րոյին,
Էրնեկ ընձի առնողին,
Շամամ ծծեր գրկողին։

255(356).
Կաքավ կայնե գերանին,
Ոսկի ըլուլ բերանին,
Կաքավ ջան, ղայթան գործա,
Ախպորս չուխի րերանին։

256(357).
Կաքավ կայնե վեր քարին,
Կձենցու ձորա միջին,
Կաքավ ջան, ղու կռկռա,
Հիրգուն յարս աուն գիքա։

257(358).

Կաքավ կայնե դերանին,
Ոսկե բլուլ բերանին,
Կաքավ ջան, գործա օսկին,
Յարիս շուխի բոլորին։

258(359).

Կաքավ կայնե վըր քարին,
Ոսկի ղանակ բերանին,
Խնձոր կիսա, աա յարին,
Կես՝ ընձի, կես՝ Շուշիկին։

259(360).

Ջալըմ, ղուլում աեքերկին,
Գնա խասի քո շըրկին։

260(361).

Զվածեղ՝ խփի տկին,
Մանուշակ՝ Թփի տկին,
Կուրսուկ յարս գտեր եմ,
Խնձորի ծառի տկին։

261(362).

Վիճակ նստե վըր պատին,
Աղապներր վըր լակին,
Վիճկի ռաքի զարպապին.
Ջան վիճակ, ջա՜ն ջա՜ն։

262(363).

Ամի, մեռնիմ քու բեղին,
Ընձի կարկա մըջ գեղին։

263(364).

Ջուրն հէլե արպին-արպին,
Հելե Թալե մեր Թարպին։

264(365).

Ավլի Թաւի փոշին,
Հելա կայնի ջոշին,
Տեսնամ ախպերս ե՞ք գա,
Վարդեր ջարեմ դոշին։

265(366).

Ծաղիկ եմ քաղել գեղին,
Դրել եմ քարակողին։

266(367).

Ծաղիկ եմ քյաղե դեղին,
Դրել եմ ղարա կողին.
Իմ ծաղիկը լուս կուտա,
Դուշմնի հաչք դուս կուտա։

267(368).

Պստի աղջիկ, լավ աղջիկ,
Դու իմ խամար դավ, ախչիկ,
Ես քե գողտու սիրեցի,
Էս ո՞ն էրեց ցավ, ախչիկ։

268(369).

Դուն կայնար բանցր սարին,
Աչքով կանես քո սիրածին,
Նոր Թմմավ քո քսանչորս տարին.
Ղալամ ղարկիր դավԹրին։

269(370).

Սարի արաղին մեռնիմ,
Գինու կարասին մեռնիմ,
Ջաղդի դալող, յարո ջան,
Սրաիդ մուրաղին մեռնիմ։

270(371).

Մերեր եմ սերն էրեսին,
ԱնԹաուամ Թեր երեսին.
Ով որ իմ սիրած չիտա,
Աստու կրակ երեսին։

271(372).

Սիրեր եմ սերն հերեսին,
ԱնԹսւտամ Թերն հերեսին.
Ով իմ սիրածն ինձ չաա
Աստծու կրակն հերեսին։

272(373).

Մանուշակ Թփի տկին,
Զվածեղ խփի տկին,
Կորած յարս դյտեր եմ
Խնձորի ծառի տկին։

273(374).

Բերանդ ֆռանդ, ծծերդ ծոցիդ բալնիս,
Գյացեք յարիս ասեք, Թող կայնի տանիս։

274(375).

Ամբեր ա, ձուն չի գալիս,
ՄԹնեբ ա, աուն չի դալիս։

275 (376).

Կայնել ա, աուն չի դալիս,
Աչքիս էլ քուն չի դալիս։

276(377).

Ջաղաց ջաղացին մոտիկ,
Էրեսն էլ նռան խատիկ,
Շեկ աղջիկ, ծոցիդ մեջը,
Հա՜մ խամրարձում, հա՜մ ղատիկ։

277(378).

Ջաղացը՝ ջաղցին մոտիկ,
Երեսդ՝ նռան հատիկ,
Շեկ աղեն ծոցիս պիտի,
Հա՜մ համրարձում, հա՜մ ղատիկ։

278(379).

*Ժանգռաքթիկ կնգտիք,*
*Կուսիք, շուղիք կռվտիք։*

279(380).

*Ջուրն ա հելե առվներ,*
*Գրող տանեք պառվներ,*
*Վարդ մանիշակ խարսներ,*
*Կարմիր խնձոր ախչիկներ,*
*Դալար վարոց աղեկներ։*

280(381).

*Տղա՛, արևուա մեռնիմ,*
*Օսկե մաղերուդ մեռնիմ,*
*Էկել ես ինձ տանելու,*
*Օսկե կողրանդիտ մեռնիմ։*

281(382).

*Վիճակ կասեմ, կամչնամ,*
*Ծլեմ, ծաղկեմ, կանչնամ,*
*Ոն որ դյա մեր վիճկի գող,*
*Արնաշաղախ մանի լող։*

282(383).

*Յաման սղե, դու արեցիր,*
*Թամախ արիր խարընոցին,*
*Ընձի ավիր զրկանոցին։*

283(384).

*Սարի լանջին մե հախպուր,*
*Մեջն էրկու բաժակ ջուր,*
*Մեկ ես խմեմ, մեկը՝ դու,*
*Ջմոռանանք մեկ մեկու։*

284(385).

*Սարի տկի պաղ ախպուր,*
*Արծթե թաս, օսկե ջուր։*

285(386).

*Բոստնի բոլոր մանդր ուռ,*
*Բոլ ա կայնես դուքնի դուռ,*
*Հըմեն կասեն քեղի ծուռ։*

286(387).

*Գյանջուց էկավ ըեռ՛ նուռ,*
*Էկավ, հիճավ ժամու դուռ.*
*Ժամու դռան ավելը,*
*Ես կչոկեմ լավերը։*

287(388).

*Բոլ ա կայնիր դուքնի դուռ,*
*Սիրած ունես, կասեն ծուռ.*
*Իմ սիրած ընձի ավնք,*
*Կերթամ թալեմ քաղքի քուռ։*

288(389).

*Արազն ընցած են կուռը,*
*Քաղեցի. Գյանջի նուռը,*
*Թեկուզ քցեն սև ջուրը,*
*Ես չեմ առնի էն ծուռը։*

289(390).

*Կանցիլյարի դուռը՝ տասերկու խսիր,*
*Ախ իմ ախպորն ա տարած,*
*գերմանու հեսիր։*

290(391).

*Կանցիլարի դուռը, կվառի փուռը,*
*Վեց տարեկնուց տեսանք, մեր մոր*
*մռմուռը։*

291(392).

*Կանցիլալի դուռը, կվառի փուռը,*
*Նորից տեսա, ախպորս մոմուռը։*

292(393).

*Բորիկ մի քոշե, փուշ է,*
*Յարի պզպիկ սնուշ է։*

293(394).

*Երկինքն էր ամպե, կուգեր մառմառ*
*ձուն,*
*Կուգեր կթափեր, վրր ղարիբ*
*մարդունս։*

294(395).

*Ջաղցի դռներ սաշուկ է,*
*Ղալամով նախշուկ է,*
*Ղալամ քաշողին մեռնեմ,*
*Ղալամ քաշողն իմ յարն է։*

295(396).

*Ջան դյուլում կասեմ, կշարեմ,*
*Ջան դյուլում, ջա՛ն, ջա՛ն,*
*Լցնեմ տոպրակ, կկարեմ,*
*Ջան դյուլում, ջա՛ն, ջա՛ն։*

296(397).

*Թավեն ըերեք, ձու խաշեմ,*
*Ելնեմ կտուրը՝ աշեմ,*
*Տեսնամ՝ յարս գալի՞ս ա,*
*Ջոքեմ, չաքմեքը քաշեմ։*

297(398).

*Ջուն դնեմ թավեն, խաշեմ,*
*Հելնեմ երթիկը աշեմ,*
*Տեսնամ՝ յարս գալի՞ս ա,*
*Ջոքեմ. չաքմեքը քյաշեմ։*

298(399).

*Դացինք Նորաշեն*
*Բլղուր կխաշեն,*
*Խորոտիկ յաշին,*
*Թափած թամաշեն,*

Կոլխոզ կքյաշենի։

299(400).

Սաղ սարին ծոմ ու պաս եմ,
Քեզ համար օսկի թաս եմ,
Սրտիս միջի դարդերը
Հալրաթ մի օր քեզ կասեմ։

300(401).

Ես մի անղալադ ղուշ եմ,
Թ'այերիս մեջ նմուշ եմ,
Ինչ հարսն ու աղջիկներ աեսնես,
Ես բոլորից անուշ եմ։

301(402).

Բախչա ունեմ, լոր չունեմ,
Նխշուն աղջիկ, յար չունեմ,
Անաեր-անտիրական եմ,
Աշխատող աղբեր չունեմ։

302(403).

Ես խորոտիկ աուն ունեմ,
Մեջը օսկե սուն ունեմ,
Սունը, դերան, քար պիտեր,
Իմ ուզած յարը պիտեր։

303(404).

Ես մի պուտ ջուր եմ,
Գեշ մարդկանց թուք ու մուր եմ։

304(405).

Ես մի ղարիր ղուշ եմ,
Թ'այերիս մեջ նմուշ եմ։

305(406).

Վիճակ, վիճա՛կ, վիճակի դուռ,
Էկե նսաե մամու դուռ,
Կալե-կապե կուռ ու ճուռ,
Ջանե թշին կարմիր նուռ։

306(407).

Ծաղիկ, ես քու ծառն եմ,
Վիճակի միջի խաղն եմ,
Քամին ղանեց գլորեց,
Վաթանս մոլորել եմ։

307(408).

Ախպեր, առածիդ մեռնեմ,
Գինուդ, կարասիդ մեռնեմ,
Ճամփա դացով մեծ ախպեր,
Թուրիդ-թվանքիդ մեռնեմ։

308(409).

Դու ելել ես կերթաս ի բեր,
Ոչ բերն էդնի, ոչ բերաաեր,
Խեր չտեսնին էս խերն ու մեր,
Ընձի չանին էս դարդին աեր։

309(410).

Բարձի տկեն խոտ կուգեր,
Տեղն իցկեցի՝ փոնթ կուգեր։

310(411).

Իմա՞լ էնեմ բեդ-բեդ դարդեր,
Ձուն ա դրե աշնան արտեր,
Ձուն ա դրե բանցրիկ սարեր,
Հալեր, թափեր մարմառ քարեր։

311(412).

Էս դշեր, սիրուն գշեր,
Ես կպաքեմ քո թշեր։

312(413).

Օրեր, օրեր,
Ո՞ւր եք կորեր,
Էրնեկ էն օրեր,
Օր կլնինք սարեր։

313(414).

Խարս խան վիճակն ի բարին,
Շուտ խասնես քու սրտի մուրազին։

314(415).

Աարերի հովին մեռնեմ,
Իմ յարի բոյին մեռնեմ,
Ես սիրել եմ ես կառնեմ,
Ով կուգա ինչ ասա։

315(416).

Կռունկ, կոմանիդ մեռնեմ,
Ջայիր-չիմանիդ մեռնեմ,
Կռունկ, կոմանիդ մեռնեմ,
Օսկե կտուցիդ մեռնեմ։

316(417).

Կռունկ, սիրես քո մեկ բալի արեր,
Յարս մնաց Ջտնդեղուրա ձորերը։

317(418).

Սինու միջի թուրն եմ,
Գիվիաոնի քուրն եմ։

318(419).

Ծառի տկին պաղ հախպուր,
Ախպեր, արի տար քո քյուր,
Քյո քյուրն ընձի հավան չի
Տար ընձնից լավին տուր։

319(420).

Ծառի աակ մացեր եմ,
Թառ լաշիկ լվացեր եմ,
Ա՛յ սարի սիրուն ախչիկ,
Դարդովդ դյացեր եմ։

320(421).

Սարի սինձը ի՞նչ կէնեմ,
Կաթ ու բրինձ ի՞նչ կէնեմ,
Ես սիրեր եմ, ես կառնեմ,
Խոսկն ու խարար ի՞նչ կէնեմ։

321(422).

Պստի-պսաի իլիկ եմ,
Բազրղանի կնիկ եմ,
Բազրղան, աստված սիրես,
Որ մի քաղաքր մտնես,
Իմ յարին Հետղ բերես։

322(423).

Պսաի-պստի իլիկ եմ,
Բազրղյանի կնիկ եմ,
Բազրղյան նսան թախտին,
Հաշկով կէնա խանըմին։

323(424).

Գյուլթտնին խտց կրներեմ,
Բերանր բաց կրներեմ,
Տես քեզ ինչքան կսիրեմ,
Ջուկ տապակած կրբերեմ...

324(425).

Հերեվտն երթալու եմ,
Քերեկան կարթալու եմ,
Ես ի՞նչ կէնեմ քերեկան,
Իմ յարն ա աաս տարեկան։

325(426).

Ծառի տկին էլ ունեմ,
Ըռանգ-ըռանգ թել ունեմ,
Տղա, օչխարդ քաշա,
Ես քու վերա սեր ունեմ։

326(427).

Բերդի գլոխ էլ ունեմ
Ըռանդ-ըռանդ թել ունեմ,
Աիպեր կըսա քուր չունեմ։

327(428).

Նստի դուռը, էլ ունեմ,
Ըռանգ-ըռանդ թել ունեմ,
Քուր նստե, արցունք թափե՝
Իր կորած ախպոր Հապով։

328(429).

Դեղ եմ դրել, Հավան չեմ,
Ես իմ գլխին դիվան չեմ,
Փետե դանկով մարդ ըլնեմ,
Ես էն տղին առնող չեմ։

329(430).

Կերթամ ախպորս կասեմ,
Գուքա զարդա խանչլով,
Խանչալ կեզի պուտ արուն
Կթափի քու թևերուն։

330(431).

Ես մի պուճուր էրկաթ եմ,
Բազրդանի մկրատ եմ,
Դուռդ բաց, բարի մարդ եմ,
Սիրո մոլորված վարդ եմ։

331(432).

Սարերի Հովին մեռնեմ,
Ջորերի Հովին մեռնեմ,
Իմ բալի բոյին մեռնեմ,
Բալա զուրրան, բալա ջան։

332(433).

Ես աղջիկ եմ՝ ալ կուզեմ,
Գլխիս օսկե շալ կուզեմ։

333(434).

Ես\ աղջիկ եմ՝ ալ դուզեմ,
Բարակ բոյիս շալ կուզեմ,
Երբ օր զացի կեսրանց տուն,
Օսկի ու արծաթ կուզեմ։

334(435).

Ես աղջիկ եմ ալ կուզեմ,
Բարակ մեջքիս շալ կուզեմ,
Եփ որ մտա էզ տնիկ,
Օսկին ծալրեծալ կուզեմ։

335(436).

Ես աղջիկ եմ ալ կուզեմ,
Գլխիս քիրմա շալ կուզեմ,
Պալատ-մալատ պետքը չի
Մի պսալիկ զալ կուզեմ։

336(437).

Ես աղջիկ եմ, էլու եմ
Նշանելու եմ, ջելու եմ,
Եփոր զացի էլու տուն,
Ոսկին խաթըրով կուզեմ։

337(438).

Ես աղջիկ եմ, ալ կուզեմ,
Բարակ բոյիս շալ կուզեմ,
Եփ որ զացի կեսրանց տուն,
Քյամար իմ մեջքով կուզեմ։

338(439).

Ես աղջիկ եմ, ալ կուզեմ,
Գլխիս օսկե թաս կուզեմ,
Երբ որ մանեմ էն անեն,
Բարակ քիրմա շալ կուզեմ։

339(440).

Ես էս սարեն չեմ,
Ղարիր բլբուլ եմ,
Ղարիր բլբուլ եմ,
Յարիս կարոտ եմ։

340(441).

Յարիս ղանչեցեք, դուրս բերեք,
Տասթմալ մեջքին կապեցեք,
Թուխ-թուխ հաշկեր լացուցեք։

341(442).

Էլի էս յարն եմ,
Քո սիրահարն եմ,
Քո մեկուճարն եմ,
Դուռնամ քե կառնեմ։

342(443).

Վիճուկ ասեմ, ամանչեմ,
Ծլեմ, ծաղկեմ, կանանչեմ,
Բալկոնի դռներ բացեմ,
Ես իմ յարը ճանաչեմ։

343(444).

Ախպեր, հանաքիդ մեռնեմ,
Ջերիդ ղանակին մեռնեմ։

344(445).

Ախպեր, հանաքիդ մեռնեմ,
Ձեռքիդ ղանակին մեռնեմ։

345(446).

Ծաղկավանա գալիս եմ,
Քրաներ եմ, լալիս եմ,
Հո՞ւր ա իմ խեղճ բալեն,
Էս սարի լալ եմ ղարձե։

346(447).

Թռի, թռի, թռցնեմ,
Կայնակ-արախ խմցնեմ,
Սև խավու միս կերցնեմ,
Չինարի խով քնցնեմ։

347(448).

Սարի արազին մեռնեմ,
Դինու կարասին մեռնեմ,
Շեկ աղա, ղումար աղջիկ,
Սրտիդ մուրազին մեռնեմ։

348(449).

Սսեղս թելեմ,
Քովս ի պայեմ,
Դուշմանս մեռնի՝
Պադանքը կարեմ։

349(450).

Ես մի ղարիր ղուշ եմ,
Թայերիս մեշ նմուշ եմ,
Յարս էկավ, անց կացավ,
Ես ամենից անուշն եմ։

350(451).

Ջահել եմ ընկեր չունեմ,
Ընկել եմ, վայ աեր չունեմ,
Ոչ լավ ըսեք, ոչ էլ վատ,
Հտրսաութjուն, սեր չունեմ։

351(452).

Սրտովս եմ սիրե,
Մարդ չարե զոռով,
Արի բարրշենք,
Մի մնա խռով։

352(453).

Սարերի սինձն ինչ կանեմ,
Կաթով բրինձ ի՞նչ կանեմ,
Թող իմ սիրածն ինձ տան,
Ոսկի, արծաթն ի՞նչ կանեմ։

353(454).

Խնձորը գլորել եմ,
Ճամբեքը մոլորել եմ,
Իրեք տարի ա, յար ջան,
Քե վրեն սովորեր եմ։

354(455).

Յար սեֆիլ եմ, տուն չունեմ,
Ճնճղկա պես բուն չունեմ,
Ոն որ իմ յարը տարավ,
Սև անեծքով անիծեմ։

355(456).

Գնալու եմ Երևան,
Կարդալու եմ քերեկան,
Ի՞նչ եմ անում քերեկան,
Յարս է տասնութ տարեկան։

356(457).

Երկարասոյիդ մեռնեմ,
Ջանայլու բոյին մեռնեմ,
Եկած ա քող անելու,
Էկող ջահելին մեռնեմ։

357(458).

Կանչա, հավեսիդ մեռնեմ,
Նախշուն մուրաղիդ մեռնեմ։

358(459).

Էթամ սուգը դաա կանեմ,
Իմ բալին շահզադ կանեմ։

359(460).

Արագ, ջրերից մեռնեմ,
Կանաչ մուրազից մեռնեմ,
Յոթ տարի ա չեմ տեսե,
Սրտով սիրածիս մեռնեմ։

360(461).

Ծաղիկ ասեմ ու շարեմ
Լցնեմ տոպրակն ու կարեմ,
Տանեմ Հերևան ծախեմ,
Մի այլուխ առնեմ, փախնեմ։

361(462).

Բաղչա ունեմ ծառներով,
Մեջը լիքն ա զառներով,
Գառներ մատաղ տրեցի,
Ազիզ յարիս ձեռներով։

362(463).

Աղջիկ կայնե թմբան հով,
Ծամեր փռե գատու բոյ։

363(464).

Խաց եմ խորե խորերով,
Զենս ա հընդե ձորերով,
Ճրագ չեմանն ա վառում,
Դուշման կռանն ա պաառում.
Խարս, խան մի բարի վիճակ։

364(465).

Խաց եմ թլխե խորերով,
Զենս ա ընգե ձորերով,
Աստված ջան, մուրազս տու,
Մի թող ընձի խոցերով։

365(466).

Խաց եմ խորե խորերով,
Զենս ցրվե ձորերով,
Աստված ավե մալ դովլաթ,
Դուշման մացե պադռելով։

366(467).

Կանաչ արաեր խճերով,
Իմ ախպերն նխշուն ըշերով,
Ելա սարն ու դարձա,
Սարեր վը դլուխս բարձա։

367(468).

Ղուշըմ թռավ էս արտով,
Երդեց իմ սազի ղայտով,
Սաղշի էլա, սաղ դառա
Կուրխսուկ յարիս դարդով։

368(469).

Ղուշըմ թռավ էն արտով,
Գրեց իմ սազի ղայտով,
Սազչի էլա, սազ առա,
Կուրխսուկ աղբորս դարդով։

369(470).

Ղուշըմ թռավ էս արտով,
Ջարկի դցի էն քարով,
Տարանք լփինք բիբարով,
Նստանք կերանք ջուխա յարով։

370(471).

Մեռնիմ, մեռնիմ, մեռնելով,
Քեզից կուզա բեռներով,
Բեռներն ի՞նչ ա՝ քարուքար,
Դու էլ վրեն սար ու բար։

371(472).

Թոռ թալած թեերից մեռնիմ,
Նոր գալած բեղերից մեռնիմ։

372(473).

Թալեր եմ դուզուն-դուզուն,
Իմ սիրա քեզի չի ուզում.
Ոտս դրի կալասկեն,
Ես կդաղռիմ ձեր ավկեն։

373(474).

Ախ մեր տուն, ձեր տուն, հիրար
դիմաց։
Աչքով կէնեմ, ընքով իմաց։

374(475).

Ծաղիկ քյաղեմ մաղերով,
Դնեմ դուռը շաղերով,
Իմ ծաղիկն լուս կուտա,
Դուշմնի հաշկ դուս կուգա։

375(476).

Կասվհասի հնդերը
Մենք չոկել ենք ծանղրր։

376(477).

Ոչխարն արել եմ բակը,
Սիրել եմ Ալագյազը,
Դեմ տվեք սելի ակը,
Յայլուղը դցի, թող գա։

377(478).

Ջրի ղրաղն աղ պիտեր,
Իմ օրաակին ղաղ պիտեր,
Ի՞նչ եմ անում թուլնչին,
Իմ յարը շայբաղ պիտեր։

378(479).

Ախ իմ օրեր, օրեր,
Դու կո՞ր եք կորեր,
Ախ իմ օրեր, օրեր,
Հո՞ւր ա իմ բոլու չորեր։

379(480).

Էս ֆայտոնը մեզ լիներ,
Ակները ստրքին լիներ,
Խեղնեմ էրթամ յարիս մոտ,
Ողջ գիշեր երդար լիներ։

380(481).

Մեր գուտը պաղ ու բուղ էր,
Իմ սիրտն էն տլին կուզեր։

381(482).

Էլա սարը սատիկ էր,
Յարիս խաքածն լատիկ էր։

382(483).

Հելա սարր սասաիկ էր,
Յարիս խտքածն լաստիկ էր։
Հելա սարըն ու դարձա,
Սարր գլխիս ըարձր ա։

383(484).

Հելա սարր սասաիկ էր,
Քո խաքածր լատիկ էր,
Իմ ադու անուշ փեսա,
Արի՛ մեր տունը, խոսա։

384(485).

Այս տներ, պուճուր տներ,
Երազ է օսկե սներ։

385(486).

Քանաքեռ բանցր գյուղ ա,
Ջուրն խիվնդի դեղ ա,
Էդ ինչ կոապաշա դեղ ա,
Սիրած սիրածի չեն տա։

386(487).

Սիրեխը ղոխ ա դառե
Իմ յարը բոխ ա ղառե։

387(488).

Ախպե՛ր, ախպե՛ր, ջան ախպե՛ր
Ջանս քե ղուրբան, ախպե՛ր։

388(489).

Ախպե՛ր, ախպե՛ր, ջան ախպե՛ր,
Ծամս քե խարղան, ախպեր,
Ջտրկ բող եղան, ախպեր,
Դարձի՛ արի՛, տուն, ախպե՛ր։

389(490).

Ախպե՛ր, ախպե՛ր, ջան ախպե՛ր,
Շաքյար մաղեմ՝ կեր, ախպեր,
Ծամերս քե խարղան, ախպեր,
Ջարկ բող եղան, ախպեր,
Գնա՛ ղողան, ջան ախպե՛ր։

390(491).

Էլա տեսա՝ մեկ չկեր,
Մեկի գլոխ կտրած էր,
Վերցրի դրի կրակին,
Հելավ թափավ ճրադին։

391(492).

Ջայի կրաղ արփա էր,
Մեր բերածն քռփա էր,
Բարի լո՛ւս ջտն, բարի լո՛ւս,
Ասված պախտ մեր էրկուս։

392(493).

Գացի չայը՝ բուղ էր,
Իմ դարդ խազար էր,
Գացի ջաքյար առա, տուղ էր
Վա՜յ իմ սև բախտից։

393(494).

Կարրներ պտղ ու բուղ էր,
Իմ խոր դուռ դուրան-դուղ էր,
Էկան ընձի ուզելու,
Իմ խեր խարրնոց կուզեր։

394(495).

Շիվ կա՝ ջվի նման չէ,
Բաղ կա՝ բաղի նման չէ,
Կամաց-կամաց դուս գուքան,
Մեկ իմ յարին նման չէ։

395(496).

Գուլթանը ման եմ ավե,
Սիրել եմ, ջան եմ ավե,
Օխտր տարի սիրելուց,
Մե օր իրզար եմ տվե։

396(497).

Յոնջեն յան եմ տվե,
Սիրել եմ, ջան եմ տվե,
Օխտր աարի սիրել եմ,
Մեկ ուրիշին եմ տվե։

397(498).

Առու-առու եմ թոե,
Քտոսուն կաքավ եմ բոնե,
Համրով թառն եմ ղրե։

398(499).

Սարերր ձուն ա էկե,
Իմ յարր յան ա էկե,
Իմ մերր քեզ աղջիկ չի տա,
Իմ ճանր յան ա էկե։

399(500).

Հէրթիկր բուն եմ սարքե,
Տղեքին ջուն եմ սարքե,

Նազ կանեմ, դոլում չի,
Լակի Թարգը տալում չի։

400(501).

Սարերը ձուն ա էկե,
Իմ յարը տուն ա էկե,
Մեռնեմ էղ Թուխ աչերաց,
Սրտիս սրուն ա էկե։

401(502).

Տեղ եմ դցե՝ մինդար է,
Մեջի քնողը ջինատր է։

402(503).

Կանչե՞ կռունկ. կանչե՞ քանի գարուն է,
Աշխարհ՞ արև է, ընձի դուման է։

403(504).

Հերևան բաղ եմ արև,
Ջիդյարս դաղ եմ արև
Դոստ ու դուշմնի խոսքով,
Լալս ծիծաղ եմ արե։

404(505).

Հերևան բաղ եմ արե,
Ջիդյարս դաղ եմ տրե,
Դոստը դուշմանի մեջը,
Լացս ծածաղ եմ արե։

405(506).

Տղա, քո ֆասն էս ծռե,
Ոտդ մեր դոնեն կարե,
Հար ե՞րբ մնամ ղարընջի,
Հաշկս ճամփեդ յարընջի։

406(507).

Հյուսիս քամին դալիս ա,
Խնամու դռան տալիս ա,
Խնամի ջան դուռդ բաց,
Բադավորդ դալիս ա։

407(508).

Քաթան շորեր եմ կարել,
Մանտր կոճակ եմ շարել,
Քնի, իմ ախպոր սիրած,
Քեղնից լավին եմ ճարել։

408(509).

Ամպեր, մի քիչ հով արեք,
Անձրև թափեք, ծով արեք,
Վատ մարդի էլը դյունը,
Սև հողի ատկովն արեք։

409(510).

Մալուլ-մալուլ ման եմ դալիս մայլեքը,
Վախենում եմ, դուլով խփեն դյադեքը։

410(511).

Տնդող-տնղող ման ես դալի քուչեքը,
Վախենում եմ քարով ղարկեն ղյաղեքը։

411(512).

Աարեր ջան, ղուք կանանչեք,
Ճամփեքը հասաաա բացեք,
Սիրած սիրածին աեսնի,
Ամբողջ երկիր ճանաչի։

412(513).

Խավքեր, Թևանի արեք,
Յարիս հովանի արեք,
Թող փչա բարակ քյամին,
Հեան էլ դուք օրոր արեք։

413(514).

Խավքեր, Թևանի արեք,
Ղարիբիս դուք ասւն բերեք,
Ընդոր էնքյան ես կուզեմ,
Ջուկ ապակած կպախեմ։

414(515).

Ջրի միջի տաշ քարը,
Ախպեր, ըլնեմ քո ճարը,
Էդ քո բոյի ղյարդանը,
Արժե գովեն բիրդանը։

415(516).

Ջուր կա Թասով, ջուր բերեք,
Իմ մեկ ախպոր քուր բերեք։

416(517).

Կողբա լոթի դյաղեքը,
Ասել են լավ ղայդեքը,
Խարար տարեք իմ մորը,
Ես չեմ առնի դյադեքը։

417(518).

Արաղա խոր ադեքը,
Կոխպա լոթի դյադեքը,
Նսաեր են ղուքաններըը,
Ասևս են լավ ղայղեքը։

418(519).

Հևրևանա հարեքը,
Կողրա տղա կյադեքը,
Քոման լցվան միկիաան,
Կասեն սիրուն կայդեքը։

419(520).

Ջուր բոնի՝ հելա սարն,
Ջդտա ֆիտան յարն։

420(521).

Կուժն առա հելա սարը՝
Ջգտա ֆիգան յարը։

421(522).

Փշատի ծառ ուռի բար մի ատր,
Գյալա, արի քո սիրածին տար։

422(523).

Գարին ա հելե էրկու ճղևն,
Ես չեմ առնի ձեր աան տղեն,
Կերթամ կառնեմ, վերին թաղեն,
Համ չինար ա, համ էլ բարդու։

423(524).

Կայնել ես սարի ճամփեն,
Հիշում ես յարի ճամփեն,
Կտամ օսկի մատնիք,
Օր դնաս ջըու ճամփեն։

424(525).

Կաքավ թըռավ էն արաեն,
Երգեց իմ աղգի ղայտեն,
Աշըղ չեմ, աշըղ գառա՝
Կուրխուսկ յարիս ղարգեն։

425(526).

Անձրև էկավ շըղալեն,
Յարս էկավ գողալեն։

426(527).

Ալաշկերաու թոփրաղ կալեն,
Սավգով ղալկեց սրախս յարեն,
Յարս ընձի թորգեց լալեն։

427(528).

Ջուր գուքեր բանցր սարեն.
Կթափեր մարմառ քարեն,
Աղջի, մի գարձի կրարեն,
Կխանես քո յարեն։

428(529).

Ջուր գուքեր բանցր սարեն,
Կթափեր մարմառ քարեն,
Աղջի՛, մի ղարցի քո իրգարեն,
Կխանես գռառ յարեն։

429(530).

Ջուր կիգեր վերին սարեն,
Կիգեր կթափվեր մախմուռ քարեն։

430(531).

Կոնգյուղ գալըու փեշերը,
Էն արնախում գյշերը,
Ակռվներու բոլուքյը,
Խաներ թուրքի հաչկերը։

431(532).

Հալավ ճամփեքի ձունը,
Տարավ աչքերիս քունը։

432(533).

Հալավ ճամփեքի ձունը,
Յարս էկավ իմ տունը։

433(534).

Ժամի դռան ավելը,
Մենք չոկել ենք լավերը։

434(535).

Տերաերի ձեռքի ղուշը,
Իմ յարի կարմիր թուշը։

435(536).

Մարալի մատի փուշը,
Տերաերի ձեռի ղուշը։

436(537).

Տանս առկին էրկու ղուշ,
Մեկը՝ վարթ ու մեկը՝ փուշ,
Աստված, իմալ աստված ես,
Մեկը կաանես, մեկն էլ՝ ոչ։

437(538).

Էկավ բոշի քյարվանը,
Գնաց ձեռնես ղարվանը։

438(539).

Կամաց քշեք սելերը,
Կապեմ թըմրնիս լմրկերը։

439(540).

Իմ յարի սև քաքուլը,
Ագեյ ղոան սև ուլը։

440(541).

Տո էս գյուղը, էն գյուղը,
Քյաղեր եմ Վանա նուռը,
Ես չեմ առնե էգ ծուռը,
Կեթամ կընգյնեմ սև Քյուռը։

441(542).

Օչխարն էրեը եմ բտկը,
Դեմ ավել սելի ակը,
Ով իմ սիըածն առնի,
Ջվայելա գյլխու թագը։

442(543).

Կանանչ արաի քնարը,
Ո՞վ ա տեսել իմ յարը,
Էրնեկ յարիս տեսնողին,
Ջուխտըմ կաքավ բռնողին։

443(544).

Կանաչ սարի քնարը,

Ո՞վ ա տեսե իմ յարը,
Երնեկ իմ յար աեսնողին,
Ջուխարմ կտքավ ըռնողին։

444(545).

Ի՞նչ կանեմ դույնի մալը,
Ի՞նչ կտնեմ վղի վղնոց,
Խելքով աղեն ա րանը։

445(546).

Ջոջ տուն լեն ու հերդեն,
Խորոաներն ա մեր ջերդեն։

446(547).

Նստեր եմ ակուշկեն,
Քուրոջ հետը լրթեր եմ ջեմուշկեն։

447(548).

Ագրոր բըլուղի թեերը խաս են,
Աչքերին մեռնեմ, արաղի թաս են։

448(549).

Արև ծագեց սարեն,
Կաքավը կանչեց քարեն,
Իմ սիրածն ինձ ավեք,
Սաղանա սրտիս յարեն։

449(550).

Ծրտգի տակի մուրը,
Աշոտ, սարան քո քուրը։

450(551).

Ես պուճուր, յարս պուճուր.
Ով կտա մեզ հաց ու ջուր։

451(552).

Սարի գլոխ պաղ հախպուր,
Միջին երկու բաժակ ջուր,
Մեկ՝ ես, մեկը՝ դու,
Ջմոռանանք մեկ-մեկու։

452(553).

Ծառի տկի պաղ աղբյուր,
Արծթե թաս ոսկե ջուր,
Աղջի, ընձի պուտըմ ջուր,
Հեդուց կիգան քեղի խուր։

453(554).

Ծառի ակի պաղ աղբյուր,
Արծթե թաս, օսկե ջուր,
Ես կվառիմ քո սիրուն,
Պադըմ կուլիմ, երկու աուր։

454(555).

Սարի ակի պաղ աղբուր,
Արծթե թաս, օսկե ջուր,
Թե սիրեր ես՝ թարկս աուր,
Ես քեղ՝ ախպեր, դու ինձ՝ քուր։

455(556).

Արե առե կրնփնսց,
Արի էնենք գիրկ ու ծոց։

456(557).

Արևն առե կանփնոց,
Կանփի թփեր հերսնոց,
Ե՞փ կնղեր արևմաոց,
Յարս դա տուն, քնիմ ծոց,
Օր խմրցու պարղ ու խոց,
Ջեղի ընձի կրակ բոց։

457(558).

Արև առե կանփնոց,
Կանփի տկերն է շնոց,
Ե՞րր կլի արևմաոց,
Իմ յար գա, մաի իմ ծոց,
Օր խմրցու խոց,
Օր չեղի ինձ կրակ-բոց։

458(559).

Արե առավ կամփնոց,
Կանփի թփերն հելլի շրննոց.
Կոճակդ բաց, ես գամ քո ծոց,
Ջայնամ քո օրորոց։

459(560).

Կալը ցորեն եմ մաղում,
Սարը րանջար ես քաղում,
Ինձ օրե-օր խափելով,
Ախ, անպատանք ես թաղում։

460(561).

Հէջմածին ոփոտ եմ անում,
Շեկ ծամեր ջուխտ եմ անում,
Շան դյադեն սիրելուց,
Գիդում ա թուխտ եմ անում։

461(562).

Ջաղչի դուռն էր դդում,
Իմ առած էր եթում,
Ա՜խ իմ չար բախտիցը,
Էն էլ րանակ ա գնում։

462(563).

Մուրադ դեաի չայիրները լափ ավեց
Սալամ կաքավ ձորերի մեջ ծափ
տվեց,
Ա՛յ ջան գյտդտն, մատր վրես թափ
տվեց։
Մուրադ գետի չայիրների դոլերը,
Ես մե մարտլ, դարդից հրնդտ չոլերը։

463(564).

Էլի էկավ խամրարձում,
Տղեկ դարձած կտաղուկ շուն։

464(565).

Գիլամ, գիլամ, սարեր կլացում,
Սարերն իմ դարդից տեղից
կփաղցում,
Բալքի իմ ղարիբ ախպեր օթևան
դարձում։

465(566).

Քյավառա սար ձուն ա գալում,
Ուխաավորը տուն ա գալում։

466(567).

Ա՛յ աղա, սնունդ Հովհաննես,
Սարերը սեյրան կէնես,
Նամուսիդ ղեյրաթ կէնես,
Գյուքյաս քո յար կտանես։

467(568).

Բարակ կաստոմդ մաշես,
Բալքի հեաս բարիշես։

468(569).

Ջուրն հելե հերես-հերես,
Բաղրդա՛ն, աստված սիրես,
Քաղքե-քաղաք պդտվես,
Որ դուն դնաս Շոոտդյալ,
Իմ ախպոր հետդ բերես։

469(570).

Ջուրն հելե հերես-հերես,
Բաղրդան, աստված սիրես,
Շաա քաղքներ պառաես,
Իմ յար դդնես, հետդ բերես։

470(571).

Լոդկեն էկավ ծովու կես,
Ղամար ախչիկ շիտկի դես,
Քյե սիրեր եմ տարի կես,
Տանեմ պախեմ վարդի պես։

471(572).

Շախով-շուխով ախպերս,
Բոյով-բուսով իմ հարսը։

472(573).

Թալեր եմ դուդուն-դուդուն,
Իմ սիրտ ձեր աղդին չի ուղում։

473(574).

Բացվեր ա կարմիր դարուն,
Աիրտս լցվեր ա արուն,
Իմ խորոտ յարի սիրուն,
Կբտցվի դուn հարտվ քամուն։

474(575).

Ջուն եմ՝ կիդամ սարերուն,
Հալվիմ, լցվեմ քարերուն,
Գլգլինք մըջ կժերուն,
Կաթկթինք մըջ ծծերուն։

475(576).

Արե դիպավ սարերուն,
Կաքավ կայնե քարերուն։

476(577).

Օձ մը տեստ ճլպտուն,
Փախավ մտավ Սոլվու տուն,
Սալրին նստե նրխշ կէնա,
Հավեր բնին քըշ կէնա,
Մարդը մեռնե, ուշք կերթա։

477(578).

Հավեն ամրե, սարեր ձուն,
Ցտր խոռվե, չիդա տուն,
Արի՛, յարս, արի՛ տուն,
Արի՛, քնինք անուշ քուն։

478(579).

Արի՛ սիրուն, դնա սիրուն,
Հաղար երանի քո տան սիրուն,
Ոչ երտնի դիշու տիրուն։

479(580).

Լուսնակն հելավ լուսե-լուս,
Ե՞փ կրացվի բոլրի լուս,
Ես ու յարս հէլնենք դուս,
Դուշման տենտ՝ քոռնա լուս,
Աստված պախտ մեր երդուս։

480(581).

Ձեն տոն՝ ձեռաց հելնի դուս,
Դուշման տենա՝ քոռնա լուս։

481(582).

Աշուն ա, աշնան թսմուզ
Խտսեր ա խնձորն ու դուղ։

482(583).

Համ դյո՛ւլ, համ վա՛րդ, համ
նարդիղ,
Գյոլի կոունդ հերկեն վիղ,
Պապե, մամե, կարդե ղիս։

483(584).

Մեր տան հետև բուլրմ պնդուկ,
Ձեր տան հետև բուլրմ պնդուկ,
Առնեմ Ձուլոյ, մտնեմ սնտուկ,
Ջուր լուս օդներն մնա տնդուկ։

484(585).

Հախպրի դյլուխ էրկու նուկ,

Ընդուց հընցավ իրեք նուկ,
Ես չեմ առնի էդ խրրուկ,
Կնթամ կառնեմ իմ ծռուկ։

485(586).

Հախպրի վրեն էրկու նուկ,
Թռավ, հելավ իրեք նուկ,
Ես չեմ առնե էդ խրբուկ,
Կեթամ, կառնեմ իմ ծռուկ։

486(587).

Քյարվան էկավ, քար բերեց,
Երկու խորոտ յար բերեց,
Քամին էլավ՝ մեկ տարավ,
Էն մեկն էլ սրտովս չելավ։

487(588).

Դուքան դրի դիքնի տեղ,
Ցըրս ղըրդի ղարիր տեղ,
Որ հարամին վրա տա,
Գըլոխս կիդամ գըլխող տեղ։

488(589).

Սարերր ձուն ա դրել.
Սիրտս աշուն ա առել,
Հեռու տեղեր յար ունեմ,
Աչքերիս քունն ա փախել։

489(590).

Պլդի աղջի, սևավոր,
Խալխի դոներին սովոր,
Գնա մորդ խարցրու,
Ընձի չանա մեղավոր։

490(591).

Էընեկ իրան թառ քավոր,
Իմ Աշոտս թագավոր։

491(592).

Սարից էկավ ձիավոր,
Սողոմոն ծոցի սովոր,
Երնեկ կուտամ էն քվոր,
Ախպեր կայնե թագավոր։

492(593).

Հելա սարի գլոխ, բուսեր էր ավել,
Քաղցր ախպորս տունը, դարձավ
տնավեր։

493(594).

Ջեբս բանամ՝ փարալու,
Սիրտս բանամ՝ յարալու։

494(595).

Սիրաս էրված՝ յարալու
Յար թողնելը՝ բաղալու։

495(596).

Աղջի՛, ի՞նչ էր դիլաքդ,
Օղակ-կոճակ բիլակդ,
Մի բանա ճերմակ դոշդ,
Ընձի էրեց կրակդ։

496(597).

Ծաղիկ եմ քաղե՝ հալալու յա,
Էս ինչպե՞ս ավալու յա,
Յար ռոնել՝ լավ գըլի,
Բաց թողնել, ռալալու յա։

497(598).

Հախպուր ունեմ՝ ուրու յա,
Մըշ ղընդղընդյան ձորու յա,
Ախչի՛, ինչ լավ ծիծ ունես,
Մըշ խալ-խալ խնձորու յա։

498(599).

Սարերն սնձոտել ա,
Օչխարն բրթոտել ա,
Սարերու սինձն ի՞նչ կէնեմ.
Իմ յարն խռովել ա։

499(600).

Հերևան ալմասա շուշա,
Ախպե՛ր, քյո րարն անուշ ա.
Մե բան ասեմ չհոկես,
Յարս քեզնից անուշ ա։

500(601).

Ա՛յ հողա՛, հողա՛, հողա՛,
Գութանի տակին ցողա
Ինչքան տես ու աեն հընդնես,
Քեզի առնողըն ո՞վ ա։

501(602).

Ծաղկաման՝ ծաղիկ չկա,
Իմ յարին մայրիկ չկա,
Իմ յարի մայրիկ խորթ ա,
Վախենամ ընձի մորթա։

502(603).

Ակներուս ջուր պխտոր ա,
Յարս ինձնից խռով ա,
Գյուլլեն թուրքի ջիդյարը,
Իմ յարն ընձնից խաներ ա։

503(604).

Իմ սիրաը շաա յարոտ ա,
Թուրքի մայլեն քարոտ ա,
Արի էթանք փողլսուն,
Պագեմ թուշդ չուր լուսունն։

504(605).

Հաց եմ թխել՝ լավաշ ա,

Չարս ենք ուզել՝ թամաշա,
Մեր կուրենը բանցր ա,
Մեր խաոսը շատ քաղցր ա։

505(606).

Խնձորմ ունեմ կլոռւկ ա,
Ջորս բոլորն արծթուկ ա,
Հերս ուղեց չտվի,
Մերս ուղեց չտվի,
Ախպերս ուղեց՝ բախշեցի։

506(607).

Խնձոր ունեմ կծուկ ա,
Ջորս բոլորը նխշուկ ա,
Ախպերս ուզեց չտվի,
Ասի յարի բախշուկ ա։

507(608).

Խնձոր ունեմ կծած ա,
Ջորս կողմն արծաթած ա,
Ախպերն ուղեց չավի.
Ասի՝ յարի մաղա յա։

508(609).

Մեր բակըն մեծ բակ ա,
Թուխ գառ մեջըն կխաղա,
Յան տվեք՝ իմ յարն գա,
Հա՛մ մելիք ա, համ աղա։

509(610).

Ջիմանի մեջ բաղ ա,
Թուխ դառ մեջը կխաղա,
Ճար արեք, բալես իքա,
Հա՛մ մելիք ա, հա՛մ աղա։

510(611).

Ջոջ չայիրը ջոջ բաղ ա,
Թուխ դյաա մեջր կխաղա,
Յան տվեք, յարս էկավ,
Հա՛մ մելիք ա, հա՛մ աղա։

511(612).

Սարերը սնձոաեր ա,
Օչխարն րրթոաել ա,
Ճամփա ավեք յարս դա,
Հա՛մ մելիք ա, հա՛մ աղա։

512(613).

Քյանքուլիդ գալին մեռնեմ,
Հերեսիդ խալին մեռնեմ,
Լսեր եմ կարթացել ես,
Սաղմոսիդ ծալին մեռնեմ։

513(614).

Ա՛յ տղա, անակիդ մեռնեմ,
Ջերիդ դանակին մեռնեմ,
Փափախդ թեքյ ես դրե.
Դուքան, բաղտրիտ մեռնեմ։

514(615).

Ա՛յ տղա, յախինդ մով ա,
Սուրբ Կարապետ քեղ դյովա,
Ես քեղի խիստ եմ սիրում,
Քյո սիրտըն ընձնից խով ա։

515(616).

Ա՛յ աղա, դու հասրաթ հլնես,
Իմ ախպոր սադար հլնես,
Թե ընձնից ջոկ յար բռնես,
Դու սրտապատառ հլնես։

516(617).

Ա՛յ աղա, հասար հլնես,
Աէ խավու կաաար հլնես,
Քյե թողեմ, հուրիշ բռնեմ,
Դու լեղապատառ հլնես։

517(618).

Ա՛յ տղա, էդ իր, մեա իր,
Խանչալդ վլեդ բեա իր,
Ես դյիդի աղամարդ իր,
Ջգյիգի՝ փտաւկ փետ իր։

518(619).

Ա՛յ աղա, հուր իր, մուր իր,
Ես ծարավ ի, դու ջուր իր,
Էսա աշուն կաանեմ,
Մարալ ու ջեյրան կանեմ։

519(620).

Ա՛յ ախպեր, աղա ախպեր,
Արի էթանք բաղ, ախպեր,
Ես մարալ եմ, դու ջեյրան,
Հրնգյեր եմ չոլեր, ախպեր։

520(621).

Ա՛յ աղա, բաղի միջին,
Ոաքերդ շաղի միջին,
Կանչիր, կանչելուդ մեռնեմ,
Ես եմ քյո խաղի միջին։

521(622).

Ա՛յ աղա, ախ ես անում,
Թեերդ կախ ես անում,
Միաք ունես ինձի առնես,
Աչքով, ունքով ես անում։

522(623).

Ա՛յ աղա, վերեով արի,
Օխչարի բերովն արի,
Իմ հոր տուն ղալմաղալ ա,
Վերին թաղերու, դու արի։

523(624).

Ա՛յ տղա, տաղով արի,
Օտներդ շաղով արի,
Բոլ ա անցնես էդ պատով,
Պտտի քարեր կողրտավ,
Քու ալ ջուբեն կտրաավ։

524(625).

Ա՛յ տղա, դու Հերովն արի,
Օչխրի ըերովն արի,
Իմ խոր թաղ ղալմաղալ ա,
Շուռ տուր են թաղովն արի։

525(626).

Ա՛յ տղա, էրովն արի,
Ոչխարի բերովն արի,
Խորս դուռն ա ղալմաղալ,
Տերտերի ղոնով արի։

526(627).

Արխալուղս կարեր եմ,
Օսկե կոճակ շարեր եմ,
Նանի՛, ջան, պարզ մի անի,
Ես սիրածս ճարեր եմ։

527(628).

Սև չիր եմ, սիվսակ չիր եմ,
Վանքի ղուան օղուտ եմ,
Ի՞նչ կուտաս իմ մուշտուլուղ,
Ես քյո յարի տեղն ասեմ։

528(629).

Ռեհան եմ, դարչին եմ,
Նորադյուղում յար չունեմ,
Յարս էկավ, խռով դյնաց,
Ղարիբից խաբար չունեմ։

529(630).

Սարերումը տուն ունեմ,
Մեջը օսկե սուն ունեմ,
Ա՛յ աղա, դու քյիշ խոսա,
Քյո պես խաղար շուն ունեմ։

530(631).

Ծառի տակը խաղցեր եմ,
Լաչիկս լվացեր եմ,
Լաչիկս րոու քյար ա,
Առածս մեկսւճար ա։

532(633).

Սարի արադին մեռնեմ,
Գյինու կարտսին մեռնեմ,
Ճամփով գյալսղ շեկ տղա,
Սրաիդ մուրադին մեռնեմ։

533(634).

Հերևան բող եմ էրե,
Ջիդյարս ղաղ եմ էրե,
Դոսա ու ղուշմանի խաթրին,
Լալս ծիծաղ եմ էրե։

534(635).

Հերեան ուխա եմ էրե,
Թաքյ ծամս ջուխտ եմ էրե,
Շան տղեն սիրվե վրես՝
Գյիաա թե թուխա եմ էրե։

535(636).

Խնձոր, խնձոր, առն արի,
Կարմիր խնձոր, առն արի,
Գիտեմ, որ յարս ա րաշխե,
Կպախեմ յոթը տարի։

536(637).

Ա՛յ տղա, բաղարբաշի,
Սապոկներդ վեր քաշի,
Արի, մեր դոնով հնցի,
Քյե ասեմ՝ բարով մաչի։

537(638).

Ա՛յ կաան, մանկան կռան,
Եղունեկ թևես թռան,
Յար ջան, քե որտե՞ղ սիրի,
Քեղարդա վանքյի ղռան։

## ՊԱՐԵՐԳԵՐ *

### 1(639). ՀԱԼԻՄԱՆ

Հալիման, հալիմա՛ն,
Հալ լայլուղը իմ մոտ չի,
Դոստըմ աղե ջան,
Դոստ ղոնախը մարալի** ։

Ջարկե՛ք թող թողն հելնի,
Մեր միջի թողն հելնի։

Քանաքեռ րանցր տեղ է,
Ջուրն հիվանդի դեղ է,
Սիրած սիրածին չեն տա
Էս ինչ կռապաշտ գեղ է։

* Պարերգերը մեծ մասամբ եղանակային կրկնակներով միահյուսված անկախ խաղիկներով երգեր են, որոնք այստեղ դրվում են խաղիկներից անմիջապես հետո որոշ պայմանականությամբ, առսկ ժողովրդական խաղիկներով կազմված երգերի ամենատարածված դրսևորումներից մեկը ցույց տալու նպատակով։

** Կրկնվում է յուրաքանչյուր տան սկզբում և վերջում (Ն. Կ.)։